# ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՉՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

## ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ՄԱՏԵՆԻՑ

## ՏԱՆ ՈՐԴՒՈՅ ԹՈՐԳՈՄԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Յաղագս թէ ո՛րպէս յետ բազում շփոթի պատերազմացն Ներսեհ[1] արքայն Պարսից թէ ո՛րպէս թագաւորեցոյց զԱրշակ զորդի Տիրանայ, եւ արձակեաց յաշխարհին Հայոց հանդերձ Տիրանաւ հարբ իւրով եւ ամենայն գերութեամբն հանդերձ:

*2* Այլ իբրեւ եղեւ հաճութիւն եւ բազում խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց եւ Ներսեհի արքային Պարսից, հաւանեցան մեծաւ սիրով առնել զկամս միմեանց. եւ դարձուցանէր կայսրն Յունաց զգերութիւն արքային Պարսից: *3* Ապա եւ թագաւորն Պարսից Ներսեհ թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ, եւ հարբ նորին եւ հանդերձ կանամբք իւրեանց եւ ամենայն գերութեամբ հանդերձ եւ գանձիւք իւրեանց եւ ստացուածովք արձակեաց մեծաւ փառաւք: *4* Խաղաց գնաց Արշակ արքայ Հայոց մեծաց, թագաւորեաց յերկրին Ասորեստանեայց հանդերձ հարբն իւրով եւ ամենայն ընտանեաւքն իւրովք, եկն եհաս յերկիրն Հայոց, եւ ժողովեաց զցրուեալս երկրին, եւ թագաւորեաց ի վերայ նոցա:

*5* Եւ եղեւ խաղաղութիւն մեծ ի ժամանակին յայնմիկ: *6* Ժողովեցան ամենայն թագուցեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց. եւ էին անկասկածք բնակեալ ի խաղաղութեան մեծի ընդ հովանեաւ արքային Արշակայ: *7* Ապա կարգեցան կազմեցան յաւրինեցան խաղաղացան աշխարհն Հայոց ի մէջ երկուց թագաւորացն. եւ յայնմ հետէ բնակեալք խաղաղութեամբ վայելեալք յիւրաքանչիւր յարարս իւրեանց:

ԳԼՈՒԽ Բ.

1 Յաղագս շինութեան կարգաց յաւրինելոց աշխարհին, նուաճութեան յիւրաքանչիւր տեղիս վարուց կարգաց, նորոգելոյ աշխարհին թագաւորութեան Հայոց:

*2* Յայնմ ժամանակի խնդիր ելանէր արքայն Արշակ տոհմին զաւրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից. մանաւանդ զի իւր դայեակս եւ սնուցիչք էին: *3* Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւ-

---

1 *Պարտի լինել* Շապուհ